



Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավեր (ՀՀՆՀ)

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Փոխառություն No. 2752 – ARM: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Տրանշ1

Ավտոբուսային նոր ցանցի և ինտեգրված սակագնի ու տոմսային համակարգ

Որակի և արժեքի վրա հիմնված ընտրություն (QCBS)

Ամսաթիվ 31 մարտի, 2016 թ.
 Փոխառություն No L2752-ARM: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Տրանշ 1

Պայմանագրի համար և վերնագիր QCBS-CS-07: Ավտոբուսային նոր ցանցի և ինտեգրված սակագնի ու տոմսային համակարգ

ՀՀՆՀ ներկայացնելու վերջնաժամկետ 29 ապրիլի, 2016թ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստացել է փոխառություն Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր-Ծրագիր 1-ի ֆինանսավորման նպատակով: Սույն Ծրագիրը Երևան է եկել Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) կողմից ԱԶԲ-ին ներկայացված դիմում-խնդրանքի արդյունքում՝ ենթակառուցվածքների բարելավման մի ռազմավարական պլանի մշակման նպատակով, որ Երևանը և այլ երկրորդական նշանակության քաղաքները կվերափոխի ավելի հարմարավետ քաղաքաների: ԵՔ-ն հանդիսանում է իրականացնող գործակալությունը և գործում է որպես ներդրումային ծրագրի առաջին տրանշի Գործատու:

2. Երևանի քաղաքապետարանի “Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ” ՀՈԱԿ-ին անհրաժեշտ է խորհրդատու, ով կիրականացնի Ավտոբուսային նոր ցանցի և ինտեգրված սակագնի ու տոմսային համակարգի ծառայությունները:

3. Գնումներին առնչվող տեղեկատվություն.
- | | |
|---|-------------------|
| Ընտրության մեթոդը՝ | QCBS |
| Պայմանագրի տեսակը՝ | Միանվագ վճարումով |
| Հանձնարարականի տևողությունը՝ | 6 ամիս |
| Կարճ ցուցակի կազմման նախնական ամսաթիվը՝ | Հունիս, 2016թ. |
| Մեկնարկի նախնական ամսաթիվ՝ | Հոկտեմբեր, 2016թ. |
| Ավարտման ենթադրյալ ամսաթիվ՝ | Ապրիլ, 2017թ. |
| Գնահատված բյուջե՝ | \$850,000 |

Խորհրդատուների տեսակները. Միջազգային խորհրդատվական ընկերությունից կպահանջվեն վերը մանրամասնված ծառայությունները: Խորհրդատուն պետք է ունենա հիմնավոր և լայնածավալ փորձ հանրային տրանսպորտի շահագործման, ինստիտուցիոնալ բարեփոխման և ամրապնդման, ինչպես նաև երթևեկության կառավարման ոլորտում միջազգային նմանատիպ և նմանաձևավալ պայմանագրերի շրջանակներում: Հետաքրքրված խորհրդատվական

կազմակերպությունները պետք է տրամադրեն տեղեկատվություն, որոնցում կնշվի, որ վերջիններս որակավորված են ծառայություններն իրականացնելու համար և կներառեն նմանատիպ հանձնարարականների նկարագրություններ, ընկերության ընդհանուր կարողությունը և սույն առաջադրանքի համար անհարաժեշտ որակավորումները, որոնք կգնահատվեն որակի և գնի վրա հիմնված ընտրության մեթոդի (QCBS) համաձայն՝ նկարագրված ԱԶԲ-ի *Խորհրդարանների օգտագործման ուղեցույցում* (մարտ, 2013թ., որը ենթարկվում է փոփոխության ժամանակ առ ժամանակ):

4. ՀՀՀ-ի ներկայացում

Խնդրում ենք ներբեռնել "word" փաստաթուղթը հետևելով այս հղմանը՝ <http://www.adb.org/sites/default/files/page/83267/eoi-consulting-firms-20131114.doc> և լրացնել այն ու ներկայացնել ներքոնշյալ հասցեով: Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավերը (ՀՀՀ) պետք է ներառի մանրամասն տեղեկատվություն Խորհրդատուի կազմակերպական կարողությունների, փորձի, նախկին կատարողականների վերաբերյալ՝ զարգացած և զարգացող երկրներում իրականացված ծրագրերում, ակնհայտ իրազեկվածություն տարածաշրջանում (Հայաստան, Կովկասյան և/կամ այլ ԱՊՀ երկրներ) աշխատելու մարտահրավերներից, ինչպես նաև կարող է ներառել երաշխավորագրեր նախկին պատվիրատուներից: Հանձնարարականի տեխնիկական առաջադրանքների (ՏԱ) նախագիծը էլեկտրոնային տարբերակով հասանելի է ԱԶԲ Բիզնես Հնարավորությունների վեբ-կայքում, ինչպես նաև այն կարել է ձեռք բերել ներքոնշյալ հասցեից: ՏԱ-ը կարող է թարմացվել և փոփոխվել առաջարկների ներակայացման փուլում, ըստ անհրաժեշտության:

Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավերը պետք է ներառի ՀՀՀ-ի մեկ բնօրինակ և երեք պատճեն և պետք է ներկայացվի կնքված ծրարով ընկերության անունով և հասցեով և նշագրված լինի "CBS-CS-07- SUDIP-1: New Bus Network and Integrated tariff and Ticketing system": ՀՀՀ-ն պետք է ներկայացվի ոչ ուշ քան 2016 թ. ապրիլի 29-ին ժամը 17:00 հետևյալ հասցեով՝

Գնումների մասնագետ պարոն Արման Պետրոսյանին
"Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ" ՀՈԱԿ
Երևանի քաղաքապետարան, Երևան 0010
Բուզանդի 1/3, 5-րդ հարկ, 511 սենյակ

Ի լրումն, ՀՀՀ-ի էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկվեն arman.petrosyan@yerevan.am էլեկտրոնային հասցեին, սակայն այս էլեկտրոնային տարբերակները չեն համարվելու ՀՀՀ-ի պաշտոնական ներկայացում: Միայն տպագրված տարբերակները ստացված մինչև սահմանված ժամկետը՝ կցված լրացուցիչ էլեկտրոնային ֆայլերով (սկավառակով), պատշաճ կերպով կգնահատվեն: